

Հեղինակային Իրավունքների Հաստատման Համաձայնագիր

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0025, Չարենցի փողոց 21, թիվ 5

Հեռ. 077 07 58 66 | [www.lunostudio.com](#) | [info@lunostudio.com](#)

Ստորագրելով սույն համաձայնագիրը ես՝ որպես Մոդել ներքոստորագրողս, տալիս եմ իմ համաձայնությունը Լուսանկարչին օգտագործելու կատարված Լուսանկարները ցանկացած Կրիչների վրա (լինի դա թղթային, թե էլեկտրոնային) միայն որպես իր հեղինակային աշխատանք ցուցադրելու նպատակով:

Ես ամբողջականորեն փոխանցում եմ Լուսանկարչին կատարված Լուսանկարների հետ կապված, ներառյալ լուսանկարչական պրոցեսի ընթացքում ստեղծված բոլոր տեսա և ձայնագրական նյութերը, իմ բոլոր հնարավոր իրավունքները, որոնք սահմանաված են կամ հետագայում կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սույն փաստաթուղթը ստորագրելով՝ ես հաստատում եմ, որ ես՝ հանդիսանալով Նկարահանման Մոդել, չունեմ որևէ հեղինակային իրավունք կատարված Լուսանկարների վրա և բոլոր հեղինակային իրավունքները պատկանում են Լուսանկարչին: Բնկ Լուսանկարահանման արդյունքում ստացված լուսանկարները ինձ տրվում են միայն անձնական օգտագործման նպատակով և առանց Լուսանկարչի գրավոր թույլատվության ես չեմ կարող այդ լուսանկարները օգտագործել որևէ շահույթ հետապնդող գործունեության համար: Ինչպես նաև չեմ կարող այդ լուսանկարները ոչ անձնական օգտագործման նպատակով փոխանցել այլ անձանց:

Ես հասկանում եմ և հաստատում եմ, որ կատարված Լուսանկարների հետ կապված ես չեմ կարող ներկայացնել որևէ դրամական կամ այլ պահանջ Լուսանկարչին:

Ես հասկանում եմ և հաստատում եմ, որ սույն թույլատվությունը ունի պարտադիր իրավական ուժ իմ ժառանգների և իրավահաջորդների համար:

Ես հաստատում եմ, որ սույն թույլատվությունը հանդիսանում է անվերադարձ, գործում է ամբողջ աշխարհում և առանց ժամկետային սահմանափակման:

Սույն փաստաթուղթով ես հաստատում եմ, որ իմ կողմից սույն փաստաթուղթում տրամադրված անձնական տեղեկությունները չեն կարող հրապարակվել և կարող են միայն օգտագործվել սույն թույլատվության սահմաններում կատարվող Լուսանկարների օգտագործման կարիքներից բխող դեպքերում: Տվյալները կարող են պահպանվել այնքան ժամանակ, ինչքան անհրաժեշտ է սահմանված նպատակին ծառայելու համար:

Ես հաստատում եմ, որ հանդիսանում եմ 18 տարին լրացած անձնավորություն և տիրապետում եմ բոլոր անհրաժեշտ իրավական, ֆիզիկական և մտավոր հնարավորություններին իմ ազատ կամքով սույն թույլատվությունը տալու համար: Իմ կողմից տրամադրված բոլոր տվյալները համապատասխանում են իրականությանը:

Սահմանումներ. Սույն թույլատվությունում օգտագործված ներքոգրյալ տերմիններն ունեն հետևյալ իմաստները.

«Լուսանկարներ» — բոլոր լուսանկարները, ժապավենները, տեսա-ձայնագրային նյութերը, որոնք կատարվել են Մոդելի մասնակցությամբ սույն Նկարահանման սահմաններում:

«Նկարահանում» — սույն փաստաթուղթում նկարագրված լուսանկարչական, տեսաձայնագրման պրոցեսը, որի ընթացքում ստեղծվել են Լուսանկարները:

«Կրիչ» — թվային, էլեկտրոնային, համացանցային, տպագրական, հեռուստատեսային, կինո և ռադիո տեղեկատվության աղբյուրներ, ինչպես նաև այլ հայտնի կամ հետագայում հայտնագործվելիք ինֆորմացիոն աղբյուրներ:

«Մոդել» — ներքոստորագրողս ինքնությունը, ներառյալ արտաքին տեսքը, պատկերը և ձայնը:

«Մոդել» — Անչափահաս Մոդելի դեպքում, Մոդելի ծնողներից մեկը կամ պաշտոնական խնամակալը:

«Լուսանկարիչ» — Սյն անձնավորությունը, ով Նկարահանման պրոցեսի ընթացքում ստեղծել է Մոդելի մասնակցությամբ կատարված բոլոր Լուսանկարները:

Այստեղ կարելի է կցել
Մոդելի ցանկացած
լուսանկար կամ
լուսանկարով
փաստաթղթի պատճեն:

Լուսանկարչի տվյալները.

Անուն Ազգանունը(տպատառերով) _____

Ստորագրություն _____

Ստորագրման ամսաթիվը (OO-UU-SSSS) _____

Նկարահանման ամսաթիվը (OO-UU-SSSS) _____

Նկարահանման վայրը (երկիրը, տեղանքը, հասցեն).

Լուսն Ստուդիո, ՀՀ, ք. Երևան 25, Չարենցի փողոց 21, թիվ 5

Նկարահանման նկարագրությունը/ըրացուցիչ տեղեկություններ.

Մոդելի տվյալները.

Անուն Ազգանունը(տպատառերով) _____

Ծննդյան ամսաթիվը (OO-UU-SSSS) _____

Սեռը. արական իգական

Մոդելի տվյալները (Անչափահաս Մոդելի Մոդել*).

Բնակության հասցեն

Քաղաք _____ Մարզ _____

Երկիր _____ Հեռ. _____

Էլ-փոստ _____

Ստորագրություն _____

Ստորագրման ամսաթիվը (OO-UU-SSSS) _____

*Եթե Մոդելը անչափահաս է կամ չի տիրապետում բոլոր անհրաժեշտ իրավական, ֆիզիկական և մտավոր հնարավորություններին համաձայնագիրը ստորագրելու համար, ապա Մոդելը հաստատում է, որ ինքը հանդիսանում է Մոդելի իրավական խնամակալը և ունի բոլոր անհրաժեշտ իրավական հիմքերը Մոդելի փոխարեն համաձայնագիր տալու համար: Եթե Դուք ստորագրում եք որպես Մոդել, ապա խնդրում ենք լրացնել Ձեր տվյալները վերևում և անուն ազգանունը ներքևում:

Մոդելի Անուն Ազգանունը(տպատառերով) _____